

PRESS RELEASE

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, 29 մարտի, 2017թ.

Աղետների արձագանքման վարժանք՝ ԵՄ MOLDEX 2017 – Մաս 1 – Որոշումների կայացում

Բնական աղետները կարող են հարվածել ամենուր, ցանկացած ժամանակ: Նույնիսկ ամենալավ պատրաստված երկիրը կարող է բացահայտել, որ իր սեփական փրկարար ծառայություններն ի վիճակի չեն հաղթահարել իրավիճակը և օգնության կարիք ունեն այլ երկրներից: Եվրոպական միությունը մշակել է աղետների միջազգային արձագանքումը հեշտացնելու մի մեխանիզմ: 2017 թ մարտի 28-29-ին, այդ մեխանիզմը փորձարկվեց որոշումների կայացման վարժանքի ընթացքում, որը տեղի էր ունենում միաժամանակ Արևելյան Եվրոպայի վեց գործընկեր երկրներում, երեք ԵՄ անդամ երկրներում և ԵՄ Բնակչության պաշտպանության մեխանիզմի Արտակարգ իրավիճակների արձագանքման համակարգման կենտրոնում:

Միջազգային փրկարարական թիմերի ժամանումն աղետի վայր հաճախ ցուցադրվում է լուրերով: Սակայն, լրատվական հաղորդումները երբեք ցույց չեն տալիս այն ինտենսիվ միջազգային համակարգումը, տեղեկատվության փոխանակումը, և որոշումների կայացումը բազմաթիվ մայրաքաղաքներում, որը տեղի է ունենում նախքան թիմերի փաստացի պատվիրակումը: Որպես ԵՄ-MOLDEX 2017 անվանվող միջազգային վարժանքի 1-ին Մաս, այդ որոշումների կայացումը փորձարկվել է 2017 թ. մարտի 28-29-ին կա:յացած ուսումնավարժանքի միջոցով: Վարժանքը սկսելու համար, ահազանգող հաղորդագրությամբ հայտարարվեց ուժգին երկրաշարժի մասին, որը վնասել է Մոլդովայի որոշ շրջաններ: Մոլդովայի Բնակչության պաշտպանության և արտակարգ իրավիճակների ծառայությունը որոշեց, որ միջազգային օգնություն է հարկավոր, և ճգնաժամային արտակարգ իրավիճակների կառավարման կենտրոնն աջակցություն ստանալու հարցում ուղարկեց Բրյուսելում գտնվող ԵՄ Արտակարգ իրավիճակների արձագանքման համակարգման կենտրոն: Բրյուսելն անմիջապես կապվեց վարժանքին մասնակցող երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Չեխիայի, Դանիայի, Վրաստանի, Ռումինիայի և Ուկրաինայի մայրաքաղաքների հետ: Այդ երկրներից յուրաքանչյուրում, որոշում կայացնող անձինք հավաքվել էին ճգնաժամների կառավարման ազգային կենտրոններում և դիտարկեցին աջակցելու խնդրանքը: Աջակցության առաջարկներ արվեցին, առաջարկները համակարգվում էին Բրյուսելի կողմից, Մոլդովան որոշեց, թե որ առաջարկներն ընդունի, և, ընդունող երկրի աջակցության վերաբերյալ հարցեր քննարկվեցին առաջարկող երկրների և Մոլդովայի միջև:

«1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո չկար միջազգային օգնության պատշաճ համակարգում», - ասում է պարոն Մուշեղ Ղազարյանը՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության տնօրեն և PPRD East 2 Ղեկավար կոմիտեի անդամ: «Այս վարժանքը ցույց տվեց, որ միջազգային հանրությունը երկար ճանապարհ է անցել 1988 թ-ից ի վեր: Մենք երախտապարտ ենք ԵՄ-ից վարժանքը կազմակերպելու և, որպես միջազգային համակարգման կատալիզատոր ծառայելու համար»:

ԵՄ MOLDEX 2017 վարժանքի երկրորդ մասը տեղի կունենա 2017թ. սեպտեմբերին, երբ հինգ այլ գործընկեր երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, և Ուկրաինայի փրկարարական թիմեր կաջակցեն Մոլդովային: Երկու կհամարվեն երեք ԵՄ անդամ պետություններից թիմերով՝ Չեխիայի Հանրապետությունից, Դանիայից և Ռումինիայից:

Ընդհանուր տեղեկություններ

ԵՄ կողմից ֆինանսավորվող «Տարերային և տեխնաձին աղետների կանխարգելումը, պատրաստվածությունը և արձագանքումն Արևելյան գործընկերության երկրներում» (PPRD East 2) Ծրագրի նպատակն է՝ նպաստել Արևելյան գործընկեր երկրների խաղաղությանը, կայունությանը, անվտանգությանը և բարգավաճմանը: Այն նաև միտված է պաշտպանելու տարածաշրջանի շրջակա միջավայրը, բնակչությունը, մշակութային ժառանգությունը, ռեսուրսները և ենթակառուցվածքները՝ ամրապնդելով երկրների դիմակայելու ճկունությունը, պատրաստվածությունը և արձագանքումը տեխնաձին և տարերային վտանգների հետևանքով առաջացած աղետների նկատմամբ:

PPRD East 2 Ծրագիրը նպաստում է աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացմանը ազգային մակարդակով Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում: Այն ամրապնդում է տարածաշրջանային համագործակցությունը Գործընկեր երկրների միջև, և Գործընկեր երկրների աստիճանաբար ավելի մտեցնում է ԵՄ Բնակչության պաշտպանության մեխանիզմին: Ծրագրի տևողությունը 4 տարի է, € 5.5 միլիոն բյուջեով:

Մանրամասն տեղեկությունների համար.

PPRD East 2 Ծրագիրը www.pprdeast2.eu

Լայնածավալ ԵՄ MOLDEX 2017 դաշտային վարժանք՝ <http://pprdeast2.eu/en/civil-protection/full-scale-exercise-2/>



Մույն Ծրագիրը
ֆինանսավորվում է
Եվրոպական Միության
կողմից

